Նոտարական ակտի կոդ: 615-20170323-117-1087759
Նոտարական ակտի գաղտնագիր: GN1QDZ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ,Վայոց Ձորի մարզ, քաղաք Վայք
երկու հազար տասնյոթ թվականի մարտի քսաներեք

«Հայաստանի Հանրապետական Կուսակցությունը», իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան 2, գրանցման համարը՝ 211.172.01602, ՀՎՀՀ 02522594, ի դեմս կուսակցության նախագահ ՍԵՐԺ ԱԶԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, անձնագիր AN 0555555, տրված 02.05.2013 թ. 001-ի կողմից, հասցե՝ ք. Երևան, Ձորափի փ. տուն 72, որի անունից 20.01.2017 թ. տրված վերալիազորման իրավունքով լիազորագրի համաձայն լիազորված անձ հանդիսացող՝ ՀՀԿ կազմակերպչական հանձնաժողովի նախագահ ՌՈՒԲԵՆ ՀՐԱՉԻԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ կողմից 13.03.2017 թ. տրված թիվ 18 լիազորագրով հանդես է գալիս ԿԱՐԵՆ ԲԵՆԻԿԻ ԱՍԼԱՆՅԱՆԸ, ՀՀ քաղաքացի, անձնագիր AN 0280987, տրված 03.12.2012 թ. 020-ի կողմից, հասցե՝ ՀՀ, ք.Վայք, Ալավերդյան փողոց, շենք 10, բն. 15, այսուհետ՝ «Կողմ-1»,

և «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը», իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Կառավարական տուն 3, գրանցման համարը՝ 286.180.05321, ՀՎՀՀ 01506515, ի դեմս աշխատակազմի ղեկավար ԱՐՏԱԿ ԱԾՈՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, անձնագիր AM 0389543, տրված 25.07.2011 թ. 043-ի կողմից, հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Աստղաձոր, որի անունից 10.03.2017 թ. տրված թիվ 15 լիազորագրով հանդես է գալիս նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Վայքի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն ՍԱՄՎԵԼ ԱՊԱՎԵՆԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ, անձնագիր AN 0343062, տրված 25.01.2013 թ. 007-ի կողմից, հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Հր. Ներսիսյան փողոց, շենք 10, բն. 14, մյուս կողմից, այսուհետ՝ «Կողմ-2»,

կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կողմերի միջև 2013 թվականի հունիսի 01-ին կնքվել է համաձայնագիր՝ «Կողմ-1»-ի սեփականությունը հանդիսացող ոչ բնակելի տարածքի նկատմամբ կնքված վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին, որով նշված պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2016 թ. դեկտեմբերի 13-ը, և նշված ժամկետի ավարտից հետո «Կողմ-2»-ը շարունակել է օգտագործել և տիրապետել վարձակալության իրավունքով իրենց հանձնված գույքը, պարտաճանաչ կատարել է վարձակալության պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները, վճարել է վարձավճարը, իսկ «Կողմ-1»-ը առարկություն չի ունեցել, ուստի կողմերը, փոխադարձ համաձայնության գալով, հիմք ընդունելով ՀՀ քաղ. օր.-ի 612, 624 հոդվածների պահանջները, որոշում են վերը նշված պայմանագրի ժամկետը ճանաչել վերսկսված՝ նույն պայմաններով, անորոշ ժամկետով:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում պետական գրանցման պահից :

3. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել կողմերի համաձայնությամբ:

4. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը.

5. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերին տրվում է մեկական օրինակ, մեկ օրինակը պահվում է «Վայք» նոտարական տարածքի նոտարի գործերում, մեկ օրինակը տրվում է ներկայացնելու անշարժ գույքի կադաստրի պետկոմիտեի ցանկացած սպասարկման գրասենյակ:

«Կողմ-1»

«Հայաստանի Հանրապետական Կուսակցություն»,
իրավաբանական հասցեն՝ ք.Երևան, Մելիք-Ադամյան 2,
ՀՎՀՀ 02522594

Նախագահ՝ Սերժ Ազատի Սարգսյան
լիազորված անձ՝

«Կողմ-2»

«Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ», իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՎՀՀ 01506515

Աշխատակազմի ղեկավար՝ Արտակ Աշոտի Գրիգորյան
լիազորված անձ՝

Երկու հազար տասնյոթ թվականի մարտի քսաներեք, այսպես համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ «Վայք» նոտարական տարածքի նոտար Օլգա Վանիկի Գասպարյանիս կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրեցին իմ ներկայությամբ, կողմերի ինքնությունը, նրանց գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, ինչպես նաև ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում № 176 - ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Օլգա Վանիկի Գասպարյան